



11 (195). ՄԱՐԴՆ ՈՒ ՍԱՏԱՆԵՆ

Մարդն ու սատանեն ճամպա կէրթեն, մըջ ուրանց խավլ կը դնին. օր հեծնան զիրար: Հեծնող պտի խաղ ու պար ըսեր, օր եք օր խլըսեո՝ հեծնողն չիջներ, շալկողն չելներ հեծներ:

Մարդ կը հեծնա զսատանեն, խաղ կըսե.

Հա՛րնանա՛,
Նանա՛, նանա՛,
Հա՛րնանա՛,
Հա՛րնանա՛,
Նանա՛, նանա՛,
Հա՛րնանա՛:

Կէրթան: Սատանեն կըսե մարդուն.

— էդ ի՞մալ է, բու խաղին վեռջ չկա՞:

Մարդ կըսե.

— էդի հարնանեն է, տարնանեն հլա չետեանց է:

Սատանեն կը տեսնա՝ շարա շկա, բեզրի, մըջ քրտընքին կորեր է, լեզուն թալի դուս, չոտներ՝ կը դողան, կը թողե փախնի, մարդու ձեռքեն անջախ կազատվի:

